վասն անուան նորա զմահ[1] առ ոչինչ համարելով՝[2] զանձինս իւրեանց մատնեցին[3] տանջանաց եւ մահու՝ փոխարինի ակն ունելով ի միածնէ Որդւոյ քո՝ փառաւորելով յամենեցունց[4] Հայր Սուրբ[5]: *18* Այսաւր եւ մեք զանձինս մեր ի մահ մատնեմք եւ չարչարանաց եւ վշտի, այլ եւ վասն անսուտ[6] խոստմանդ, թէ՝ «Որ զիս ճանաչեն՝[7] ի հալածանս կայցեն», զի «Ուր ես[8] եմ, ասէ, անդ եւ պաշտաւնեայն իմ եղիցի»: *19* Եւ գիտեմք, Տէ՛ր, զի ո՛չ անտես առնես զաղաչանս մեր եւ ո՛չ ընդ վայր հարկանես զանձինս ծառայից քոց:

20 Տո՛ւր, Տէ՛ր, փառս[9] անուանդ քո վասն սքանչելեաց քոց, զոր[10] ցուցանես առ փառաւորիչս անուանդ քո յազգաց[11] եւ յաւիտեանց[12]: *21* Մի՛ տար աւտարոտից[13] զբնակութիւն սիրելեաց քոց[14] անհաւատիցն ժառանգել[15], եւ մի՛ մեծաբանեսցեն[16] հեթանոսք, թէ կործանեցաւ[17] տեղի փրկութեան[18] նոցա, եւ ոչ ոք է, որ աւգնէ նոցա, եւ ո՞ւր է Տէր Աստուած նոցա, յոր[19] յուսացեալն[20] էին[21]: *22* Յիշեա՛[22], Տէ՛ր, զգինս արեան քո եւ փրկեա՛ ի ձեռաց նեղչաց զհաւատացեալս անուանդ[23] քո: *23* [24]Զի ծանիցեն ազգք հեռաւորք զմեծութիւն քո[25], եւ յուսասցին յանուն քո ամենեքեան[26], որք երկիւղիւ ծառայեսցեն մեծութեան քո[27]: *24* Ամրացո՛[28], Տէ՛ր, զժողովուրդս քո, հովուեա՛ եւ բարձրացո՛[29] մինչեւ յաւիտեան: *25* Պարսպեա՛, Տէ՛ր, խնամատար աջովդ քո[30], զոր փրկեցեր պատուական խաչիւդ[31] քո՝[32] տալով աւգնական[1] ի նեղութեանս[2] ի դէպ ժամանակի:

---

1 *o* զմահն, որ վասն անուան նորա *փխ* վասն անուան նորա զմահ *(lsv)*
2 *o* համարեն *փխ* համարելով *(lsv)*
3 *o* մատնելով *փխ* մատնեցին *(lsv)*
4 *sv* զամենեցունց *փխ* յամենեցունց *(l)*
5 *o չիք* եւ մահու … Հայր Սուրբ *(2 տող) (lsv)*
6 *sv չիք* անսուտ
7 *sv* ճանաչեն զիս *փխ* զիս ճանաչեն *(l)*
8 [illegible]
9 *o* Որ եւ մեք այսաւր մատնեմք զանձինս մեր պատարագ վասն փառաւորեալ *փխ* Այսաւր եւ մեք … Տէր փառս *(8 տող) (lsv)*
10 *sv* զորս
11 *l* ազգաց *փխ* յազգաց *(sv)*
12 *o* յիշեա, Տէր, զգութ մարդասիրութեան քո եւ *փխ* վասն սքանչելեաց … եւ յաւիտեանց *(3 տող) (lsv)*
13 *v₄* աւտարոտի
14 *l չիք* քոց
15 *o* զժառանգութիւնս քո ի ձեռս անհաւատից *փխ* աւտարոտից … ժառանգել *(2 տող) (lsv)*
16 *o* զի մի մեծաբանիցեն *փխ* եւ մի մեծաբանեսցեն *(lsv)*
17 *o* եթէ կորեաւ *փխ* թէ կործանեցաւ *(lsv)*
18 *o* ապաւինի *փխ* փրկութեան *(lsv)*
19 *l* որ
20 *s* յուսացեալ
21 *o չիք* եւ ուր է … յուսացեալն էին *(1 տող)*
22 *hmo* Արդ յիշեա
23 *mo* անուան *փխ* անուանդ *(lhsv)*
24 *hm չիք* Զի ծանիցեն … ի դէպ ժամանակի *(նախ. 25)*
25 *o չիք* Զի ծանիցեն … զմեծութիւն քո *(1 տող) (lsv)*
26 *o չիք* ամենեքեան
27 *o* ծառայեն քեզ *փխ* ծառայեսցեն մեծութեան քո *(lsv)*
28 *o* ամրացոյ
29 *o* բարձրացոյ
30 *sv չիք* քո
31 *o* խաչիւ *փխ* պատուական խաչիւդ *(lsv)*
32 *sv* քով *փխ* քո *(lo)*